

ների մէջ եզած սառնութիւնը աւելի ևս մեծանում է ժողովրդական զպբացների գաւանական ընտառապութեամբ։ Եթէ անհնար է օրէնքը ոչնչացնել, գոնէ վերանար հոգեորականներին միայն վերապահուած հոկոզութիւնը ժողովրդական դպրոցների վերայ։

Chr. d. Chr. Welt.

ԲՐԱՆԴԵՆԲՈՒՐԳԻ ՄԻՍԻՈՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

Ապրիլի 8—9 գումարուել է Բերլինի նահանգի միսիոնարական խորհուրդի 25-րդ դիմաժողովը։ Առաջին նիստին ժամը 3-ին պաստոր Միտները մի հետաքրքրական դասախոսութիւն է կարգացել՝ «ինչպէս պէտք է երեխաներին հետաքրքրել հեթանոսական աշխարհով»։ Նա համոզեցուցիչ փառաերով ցոյց տուաւ, թէ ինչպէս ընտանիքը, դպրոցը, եկեղեցին և առհասարակ ընդհանուր դաստիարակչական միջոցները մի և նոյն ժամանակ միջոց են և երեխաներին առաքելութեան (միսիոնի) և հեթանոս աշխարհը քրիստոնէացնելու գործով հետաքրքրելու և զրուելու համար։ Մտքերի կենդանի փոխանակութեան ժամանակ այն միտքն արծարծուեցաւ, թէ ուսուցիչներին գեռ ևս վարժապետանոցների մէջ պէտք է ծանօթացնել առաքելութեան գործի հետ։

Կոսների միսիոնի բարեկամների ժողովի մէջ, որ բաց արաւ պաստոր Գարայս, խօսեց առաքելութեան աեսուչ կառւշ և նդիկ կանայք և Հնդիկ երեխաներ։ Վերնագրով։ Նա խօսում էր իւր փորձառութիւնների հիման վերայ, որ ձեռք էր բերել իւր տեսչական այցելութիւնների ճանապարհորդութեան ժամանակ։ Նա նկարագրեց Հնդիկ կանանց և երեխաների տիսուր վիճակը, Սենանայի առաքելութեան գործերը, առաքելութեան դպրոցները և ցոյց տուաւ, թէ անհրաժեշտ է բազմացնել կին գործիչների թիւը այս առաքելութեան գործում։

Ապա առաքելութեան ինսպեկտոր Վելդէն մի գեղեցիկ դասախոսութիւն կարգաց «Միսիոնը և փողը» վերնագրով։ Ահա նորա մտքերից մի քանիսը Միսիոնի վերայ եղած յարձակումները վնասում են այն նպատակի համար եղած նուիրաբերութեան գործին։ Ցանկալի է, որ այս յարձակումների դէմ ոչ թէ աստուածաբաններ, այլ միսիոնի բարեկամ աշխարհիկ մարդիկ պաշտպան հանդիսանան։ Միսիոնի գործի համար եղած եկամուտները գոհացուցիչ չեն։ Առաքելութիւնը պարտաւոր է

ընիկ երկրի այն համայնքներին, որոնք նպաստում են այդ գործին, աւելի խորը գիտակցութիւն տալ քրիստոնէաւթեան տարածման գաղափարի և պարտաւորութեան մասին։ Գրով և բանիւ պէտք է միշտ յիշեցնել, որ հաւատացեալների համայնքը ոչ միայն հաւատոյ միութիւն է, ոչ միայն աղօթքի և փրկութեան ժողով, այլ և գործի։ համայնքի վերայ պարտք է զրած Աստուծոյ կողմից քարոզելու աւետարանը ամբողջ աշխարհում, ուստի և ամբողջ կեանքը իւր բարիքներով, որոնց մէջ նաև փողը, պէտք է ժառայէ այս բարձր նպատակին, որ քրիստոնէական համայնքի իսկական կոչումն է։ Այս գասահօսութիւնից յետոյ, կենդանի վիճաբանութիւն ոկտուեցաւ գործին հմտւան անձանց կողմից և հարցը աւելի լուսաբանուեց ունկընգեցների համար անգլիական և շոտլանդական առաքելութիւնների օրինակներով։

Նետենալ օրը 9½ ժամին բացուեց կոնվերենցի ԽԵ գլխաւոր ժողովը։ Դրա Գրունդեմանը մի յետագարձ ակնարկ ձգեց անցեալ տարուայ գործունէութեան վերայ։ Ապա Լից. Վարնելը, Հռենոսի ընկերութեան նշանաւոր միսիոնարը, խօսեց ըսւն երկրի օգնական ու ժերի նշանակութեան մասին միսիոնի համար։ Ընթիւները աւելի յարմար են որպէս քարոզող աւետարանին և ռահմիբաներ հեթանոս և մահմեդական երկրներում, որովհետեւ ծանօթ են իրենց ժողովրդին, լեզուին, սովորութիւններին և մտածողութեան եղանակին։ Նրանց միջնորդութեամբ քրիստոնէութիւն ընդունած ժողովուրդը սովորում է աշխատակցել քարոզութեան գործին և հետզհետէ գաստիարակուում է անկախ գործունէութեան համար։ Զպէտք է նրանց եւրոպակացնել։ Այլ կրթութիւնն ու գաստիարակութիւնը պիտի համապատասխանէ ընթիւ ժողովրդի առանձնաւյատիկութիւններին, պէտք է յարդանքով վերաբերուել դէպի ազգայինը, սակայն աղնուացնելով և քրիստոնէական մաքով բարեփոխելով այն։ Դատախառութիւննից յետոյ վիճաբանութեան մասնակից եղան նշանաւոր միսիոնարներ, որոնք իրենց փորձառութեամբ, մանաւանդ արևմտեան Ափրիկայի գերմանական գաղութներում, լրացնում և լուսաբանում էին այն գժուարութիւնները, որ զգացել էին ընթիւներից օդնական ուժեր պատրաստելու անհրաժեշտ գործում։

Երկրորդ գլխաւոր գասահօսութիւնը կարդաց պաստօր Պառլ «Մեր գաղութների գպրոցական գործը» հարցի շուրջը։ Դասախառի տուած տեղեկութիւններից երեսում է, որ գերմանական գաղութների գպրոցները մի միութիւն չեն կազմում,

այլ փորձերի արդիւնք են կառավարութեան կամ միսիոնի կողմից կարիքների համաձայն։ Միսիոնի դպրոցները աւելի բազմաթիւ են և իրենց ձեռքն է համարեա կրթութեան գործը։ բայց այդ դպրոցները հետեւում են իրենց յատուկ նպատակին՝ կրօնական կրթութեան, բարձրացնելով նաև ընկենարի քաղաքակրթութիւնը։ Այս տեսակէտով միսիոնը մի տեսակ օժանդակ հաստատութիւն է ներկայացնում նաև պետութեան գաղթականական ձդառւմներին։ Տոգոյում (Արևմտեան Ափրիկայում) տեղի ունեցած ըանակցութիւնը գաղութների կառավարութեան և միսիոնական ընկերութիւնների մէջ ցոյց է տալիս, թէ նոյն իօկ կառավարութեան հսկողութեան ենթարկուած միսիոնի դպրոցները ծառայում են իրենց կրօնական և մանկավարժական նպատակներին։ Այս դպրոցների ծաղկման հիմք պէտք է կազմէ այս դադարիարը, թէ Գերմանիան իւր քրիստոնէական քաղաքակրթութիւնը պարտաւոր է պատուաստել իւր գաղթավայրերում։ Այս նպատակին ամենից յարմարը դաւանական քնաւորութիւն կրող դպրոցն է։ Առանց կրօնի կառավարչական դպրոցները գաղթավայրերում պէտք է միայն քացառութիւն լինեն և տեղական անհրաժեշտութեան տրդիւնք։ Հասկանալի է, որ գաղթավայրերում հաստատուած եւրոպացիների երեխաների դպրոցի մէջ պէտք է կրօնի դառաւանդութիւն լինի։ Վիճականութեան ժամանակ շեշտուեցաւ այն միտքը, թէ պէտք է աշխատել, որ գաղութների կառավարութեան և միսիոնարական գործունէութեան մէջ համերաշխութիւն ստեղծել։

Chr. d. Chr. W.

Ընդհանուր աւետարանական-բողոքական միսիոնարական
ընկերութեան մի օգտաւէտ ձեռնարկութիւն արաւ։ Նա 120-ի
չափ առաքելութեան ըարեկամներ է հրաւիրել Բերլին Ապրիլի
10—12-ին, արք և կանայք, որպէս զի նրանց միջնորդութեամբ
երրեկ գործին տեղեակ և հեղինակաւոր անձանց, միսիոնարական
կիտութեան և գործնական կեանքի մի քանի կարեռը
հարցերի մասին խորհրդակցելու և միմեանց մէջ ու կեգրոնական
վարչութեան հետ աւելի սերտ յարաքերութիւն ստեղծելու։
Երեք աստուածաբաններ պրոֆեսոր Հակման-Լոնդոնից,
պատոր Հասս-Տոկիոյից և պրոֆ. Վայնէլ Խնայից յանձն էին

Ընդհանուր աւետարանական-բողոքական միսիոնարական
ընկերութիւնը մի օգտաւէտ ձեռնարկութիւն արաւ։ Նա 120-ի
չափ առաքելութեան ըարեկամներ է հրաւիրել Բերլին Ապրիլի
10—12-ին, արք և կանայք, որպէս զի նրանց միջնորդութեամբ
երրեկ գործին տեղեակ և հեղինակաւոր անձանց, միսիոնարական
կիտութեան և գործնական կեանքի մի քանի կարեռը
հարցերի մասին խորհրդակցելու և միմեանց մէջ ու կեգրոնական
վարչութեան հետ աւելի սերտ յարաքերութիւն ստեղծելու։
Երեք աստուածաբաններ պրոֆեսոր Հակման-Լոնդոնից,
պատոր Հասս-Տոկիոյից և պրոֆ. Վայնէլ Խնայից յանձն էին